Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1507 -Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Անվանումը	Մոդելը	Չափի միավորը	Քանակը	Ծագման երկիրը	Արտահանման երկիրը	Արժեքը (դրամ)	Ներմուծման ժամկետը	
									տարի	կիսամյակ
	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	90272000	Բարձր էֆեկտիվությամբ հեղուկ քրոմատոգրաֆ	Knauer, Smartline Pump1050, Smartline Manager 5050, Smartline PDA 2850	հատ	2	Գերմանիա	Գերմանիա	55073317	2011	2
2.	90181990	Օսմոմետր	Knauer Semi-Micro Osmometer K-7400	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	2258938	2011	2
3.	701790	Սրվակներ 0,15մլ օսմոմետրի համար 100 հատ	Knauer A0914	կգ	1	Գերմանիա	Գերմանիա	5764	2011	2
4.	9027	Ավտոմատ պոլիարիմետր	Kruess P-8000	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	5494140	2011	2
5.	842121000	Ջրի մաքրման սարք	Milli-Q Direct 8	հատ	1	Ֆրանսիա	Ֆրանսիա	5977800	2011	2
6.	90273000	Ատոմային ադսորբցիոն սպեկտրասկոպ	Shimadzu AA-7000/ AAC CE(LV)	հատ	1	Ճապոնիա	Գերմանիա	25776425	2011	2
7.	84281080	Վերելակ	Kone Elevators L1 :	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	7860000	2011	2

			BKG Type 100 45/1F							
8.	90272000	Քրոմատոգրաֆներ՝ գազային և իոնային	Brucker 450- GC, Dionex ICS-1100	հատ	2	Հոլանդիա, ԱՄՆ	Գերմանիա	54749019	2011	2
9.	90278017	Դեղահատերի և դեղապատիճների լուծելիության և տարալուծելիության որոշման սարքեր	Sotax AT7 Smart, Sotax DT 2	հատ	2	Շվեյցարիա	Շվեյցարիա	10907584	2011	2
10.	902480	Դեղահատերի կարծրության որոշման սարք	Sotax, FT 2	հատ	1	Շվեյցարիա	Շվեյցարիա	2553976	2011	2
11.	90118000	Մանրադիտակ	MRC DMBA 210	հատ	1	Իսրայել	Իսրայել	880812	2011	2
12.	902780110	pH-մետր	MRC PH-207, MRC 86505	հատ	6	Իսրայել	Իսրայել	834194	2011	2
13.	841939	Ռոտորային գոլոշացուցիչ	MRC ROVA-2 L	հատ	2	Իսրայել	Իսրայել	1377368	2011	2
14.	901600100	Կշեռքներ, այդ թվում՝ նաև անալիտիկ	MRC BPS-750- C2, MRC ABX-52-X, MRC ASB – 110 – C2, MRC BPS -210-C1	հատ	9	Իսրայել	Իսրայել	3754449	2011	2
15.	841989	Ինկուբատորներ՝240, 150, 80 և 36 Լ ծավալներով, այդ թվում՝՝ նաև CO2	MRC DFI-240, MRC DFI- 150, MRC DFI – 80, MRC DFI-36, MRC 3503-2	հատ	7	Իսրայել	Իսրայել	5237145	2011	2
16.	84192000	Ավտոկլավ ուղղահայաց	MRC UTKBS-50LV	հատ	2	Իսրայել	Իսրայել	1682132	2011	2
17.	9025	Խոնավությունը գրանցող սարք	MRC CR4-KTH	հատ	3	Իսրայել	Իսրայել	1232868	2011	2
18.	84798200	Խառնիչներ և օրբիտալ թափահարիչներ	MRC HS-1, MRC HS – 4, MRC HOP-1212, MRC TOS – 4030F	հատ	6	Իսրայել	Իսրայել	849729	2011	2
19.	84213990	Վակումային ֆիլտրացման սարքեր	MRC FGS-002, MRC FGS-003	հատ	3	Իսրայել	Իսրայել	419084	2011	2
20.	847989	Ուլտրաձայնային բաղնիք	MRC AC-120H,	հատ	3	Իսրայել	Իսրայել	309412	2011	2

			MRC AC-150 H, MRC DG600							
21.	84798200	Բլենդերներ	MRC LB20ES, MRC 8010 S	հատ	2	Իսրայել	Իսրայել	558330	2011	2
22.	842390	Կշռաքարեր	MRC Weight- S- F2- 1g- 500g	կգ	5	Իսրայել	Իսրայել	242383	2011	2
23.	841939	Վակումային չորանոց	MRC 1408DIG	հատ	2	Իսրայել	Իսրայել	3269009	2011	2
24.	841850190	Սառցարան	MRC DW-86HL53	հատ	2	Իսրայել	Իսրայել	6610910	2011	2
25.	9027	Ռեֆրակտոմետր	MRC K 7135	հատ	1	Իսրայել	Իսրայել	402647	2011	2
26.	902730	Սպեկտրոֆոտոմետր և դրա բռնիչ	MRC Spectro-UV18PC, MRC 900410	հատ	2	Իսրայել	Իսրայել	2114337	2011	2
27.	841381	Պոմպեր	MRC VP 58, MRC CVP-14, MRC VP-17, MRC VP-19	հատ	5	Իսրայել	Իսրայել	1175116	2011	2
28.	84139100	Պոմպի վակումային կարգավորիչ	MRC 169300-06	հատ	1	Իսրայել	Իսրայել	44023	2011	2
29.	902910	Լաբորատոր հաշվիչ սարք	MRC CLC-570	հատ	1	Իսրայել	Իսրայել	365865	2011	2
30.	84798200	Վորտեքս	MRC SI -200	հատ	3	Իսրայել	Իսրայել	223992	2011	2
31.	903180	Տիտրատոր	MRC TIT-5	հատ	1	Իսրայել	Իսրայել	1850278	2011	2
32.	841460	Կենսաբանական անվտանգության պահարան	MRC BSC 18IIA2X	հատ	1	Իսրայել	Իսրայել	2901190	2011	2
33.	85143099	Վառարաններ, այդ թվում մուֆելային	MRC DNO -80, MRC MSF 12/6, MRC MSF 11/14	հատ	5	Իսրայել	Իսրայել	3083819	2011	2
34.	84199085	Ջրային բաղնիքի կափարիչ	MRC C-14	հատ	1	Իսրայել	Իսրայել	37455	2011	2
35.	9027	Կաթի ավտոմատացված անալիզատոր	MRC MIA-A	հատ	1	Իսրայել	Իսրայել	736312	2011	2
36.	84193990	Էքսիկատորներ	MRC 12-3050, MRC 12-3052	հատ	4	Իսրայել	Իսրայել	166861	2011	2
37.	841869	Սառույց արտադրող սարք	MRC XB-40	հատ	1	Իսրայել	Իսրայել	710039	2011	2
38.	84211920	Ցենտրիֆուգաներ	MRC SCEN-206,	հատ	5	Իսրայել	Իսրայել	3397138	2011	2

			MRC ECENR-210, MRC LCEN-201, MRC HSCEN-204							
39.	84219900	Ցենտրիֆուգի ռոտոր	MRC RA-5006, MRC RA-1508	հատ	3	Իսրայել	Իսրայել	521548	2011	2
40.	9027	Մնդի անվտանգության անալիզատոր	MRC FSA-1510	հատ	1	Իսրայել	Իսրայել	2113006	2011	2
41.	842129	Եռատեղ ֆիլտրացիոն սարքավորում	MRC MANF-3	հատ	1	Իսրայել	Իսրայել	589184	2011	2
42.	841989	Ջրային բաղնիք	MRC WBO-100, MRC WB-14, MRC WBS-14D	հատ	4	Իսրայել	Իսրայել	880055	2011	2
43.	392690	Միկրոպիպետներ	MRC MPC-8-50, MRC MPC-8-100, MRC MPC-8-300, MRC MPC-50, MRC MPC-100, MRC MPC-1000	հատ	7	Իսրայել	Իսրայել	448179	2011	2
44.	90318098	Ծխեցման սարք	Borgwaldt KC RM20D 70770010	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	28505600	2012	1
45.	90319085	Քարշիչ պահարան	Borgwaldt KC Hood 70770040	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	1983340	2012	1
46.	902710	CO/CO2 անալիզատոր	Borgwaldt KC C24 72240000	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	8659100	2012	1
47.	90271090	Օճառի պղպջակի արագությունը որոշող սարք	Borgwaldt KC Soap Bubble Flow Meter 35 ml 70241000	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	308112	2012	1
48.	40169300	Օժանդակ մասեր ծխեցման սարքի համար	Borgwaldt KC 80754910	կգ	2	Գերմանիա	Գերմանիա	2745760	2012	1
49.	902790	Օժանդակ մասեր CO/CO2 անալիզատորի համար	Borgwaldt KC 82240200	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	772900	2012	1
50.	40169300	Օժանդակ մասեր՝ 5,5 – 6,5 և 6,5 – 7,5մմ տրամագծերով ծխեցման	Borgwaldt KC 80210280, Borgwaldt KC	հատ	2	Գերմանիա	Գերմանիա	596312	2012	1

		սարքի համար	80210270							
51.	84051000	Գեներատոր	Claind NiGen LCMS 40-1	հատ	1	Իտալիա	Իտալիա	5774480	2011	2
52.	70172000	Տարբեր չափերի ապակե ծավալաչափիչ կոլբաներ կափարիչով (5-250 մլ), այդ թվում՝ էոլեմեյերի (50-1000), լայնաբերան և մուգ ծավալաչափիչներով, չափիչ գլաններ (25- 2000 մլ) և լաբորատոր բաժակներ (50-800 մլ)	Hirschmann Laborgerate	հատ	986	Գերմանիա	Գերմանիա	3293270	2011	2
53.	392690	Պլաստիկ տարա 1000մլ	Hirschmann Laborgerate 7501193	հատ	2	Գերմանիա	Գերմանիա	11287	2011	2
54.	392350	Պլաստիկ փակիչ (NS 19/26, NS 29/32, NS 45/40)	Hirschmann Laborgerate 8900275, 8900286, 8900293	հատ	250	Գերմանիա	Գերմանիա	119210	2011	2
55.	392690	Պլաստիկ տարաներ կապույտ (150, 600 և 1000մլ)	Hirschmann Laborgerate 7600191, 7600183, 7600193	հատ	16	Գերմանիա	Գերմանիա	15658	2011	2
56.	39233010	Պլաստմասե լվացման տարաներ՝ էթանոլի, մեթանոլի և ջրի համար	Hirschmann Laborgerate 7690106, 7690103, 7690101	հատ	14	Գերմանիա	Գերմանիա	31839	2011	2
57.	701790	Ապակե ծավալաչափիչ պիպետներ սանդղակներով, ինչպես նաև մեկ նիշով (0.5-20 մլ)	Hirschmann Laborgerate	հատ	240	Գերմանիա	Գերմանիա	321317	2011	2
58.	701790	Աշխատանքային ապակե շիշ (1000-2000մլ), ապակե ձագար(40-150 մմ), գոլոշիացման ապակի (35-	Heinz Herenz Medizinalbedarf	հատ	117	Չեխիա, Գերմանիա, Կանադա	Գերմանիա	255710	2011	2

		90մլ), , երիզ ստերիլիզացիայի ստուգման համար								
59.	690990	Կերամիկ հավանգներ (150-220 մլ), հավանգակոթներ (132-158մմ) և տիգելներ (20մլ, 40մմ և 30մլ, 45մմ)	Heinz Herenz Medizinalbedarf	հատ	60	Չեխիա	Գերմանիա	158563	2011	2
60.	392690	18մմ փորձանոթների ցանց պլաստնասե	Heinz Herenz Medizinalbedarf 1131963	հատ	16	Իտալիա	Գերմանիա	47622	2011	2
61.	701790	Ապակե փորձանոթներ (150x16x0.7մմ, 1000 հատ, 180x18x0.7-0.8 մմ, 1000 հատ, 160x15/16 x0.8-1մմ, 780 հատ, 160x15/16x1.1 -1.2 մմ, 1000 հատ) և անոթներ ցենտրիֆուգի համար (98x16/17x 0.9-1մմ, 100)	Heinz Herenz Medizinalbedarf	հատ	12	Գերմանիա	Գերմանիա	449840	2011	2
62.	701790	Լայնաբերան ապակե լաբորատոր շիշ, 250մլ	Heinz Herenz Medizinalbedarf 1083241	հատ	24	Գերմանիա	Գերմանիա	27919	2011	2
63.	392690	Պլաստիկ ստերիլ պիպետներ՝ 1-5մլ (1 տուփ՝ 1000 հատ) և պարաֆիլմեր (38մx10սմ, 12)	Heinz Herenz Medizinalbedarf	հատ	13	Իտալիա, Կանադա	Գերմանիա	380845	2011	2
64.	392350	Կոլբայի փակիչ պլաստիկ N29, 850	Heinz Herenz Medizinalbedarf 1012900	կգ	2	Գերմանիա	Գերմանիա	65511	2011	2
65.	392390	Պետրիի աման ստերիլ (94x16մմ, 480)	Heinz Herenz Medizinalbedarf 1130302	հատ	2	Գերմանիա	Գերմանիա	132688	2011	2
66.	690890	Սալիկներ՝ տարբեր չափերի, այդ թվում՝	Rak Ceramics	մ^2	3686.75	Արաբական Էմիրություն	Արաբական Էմիրություն	32917320	2011	2

		հատակի և կերամիկական, սալահատակներ 120x180 սմ								
67.	6910	Զուգարանակոնքեր, բիդեներ և լվացարաններ	Rak Ceramics RONDO, RESERVA, NOVA, SCOOP	հատ	35	Արաբական Էմիրություն	Արաբական Էմիրություն	1544146	2011	2
68.	848180	Ծորակներ, այդ թվում լվացարանների, ցնցուղների և բիդեների համար	Rak Ceramics RAK14003, 14000-01, 14001-01	հատ	41	Արաբական Էմիրություն	Արաբական Էմիրություն	1663304	2011	2
69.	84819000	Ուղղանկյուն ցնցուղ	Rak Ceramics RAK14018	հատ	8	Արաբական Էմիրություն	Արաբական Էմիրություն	232993	2011	2
70.	84819000	Ծորակ ցնցուղի համար	Rak Ceramics RAK10012	հատ	8	Արաբական Էմիրություն	Արաբական Էմիրություն	116448	2011	2
	Ընդամենը							310806926		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1507 - Ա որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N

«ՏՈՆՈՒՄ-ԼԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան ------ ---------- 2011 թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս նախարար Տիգրան Դավթյանի, մի կողմից, և «ՏՈՆՈՒՄ-ԼԵՍ» սահմանափակ պատաս-խանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն), ի դեմս տնօրեն Լևոն Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (նախարարությունը և ընկերությունը միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 1507 -Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով ընկերությունը պարտավորվում է կատարել ներդրումային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքները, իսկ նախարարությունը պարտավոր-վում է իր իրավասությունների շրջանակներում աջակցել ընկերությանը ծրագրի իրականաց-ման գործընթացում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է՝

2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:

2.2. Նախարարությունն իրավունք ունի՝

2.2.1. կատարելու ընկերության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն.

2.2.2. պահանջելու ընկերությունից ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները:

2.3. Ընկերությունը պարտավոր է՝

2.3.1. մինչև 2012 թվականի մայիսի 1-ը ստեղծել ներդրումային ծրագրով նախատեսված՝ սննդի և դեղերի անվտանգության փորձագիտական լաբորատորիա, որը հավատարմագրված կլինի միջազգային ճանաչում ունեցող համապատասխան կառույցների կողմից.

2.3.2. պայմանագրի 2.3.1-ին ենթակետով նշված ծրագրի շրջանակներում ստեղծել առնվազն 41 աշխատատեղ՝ ապահովելով վերջիններին մոտ 150 հազ. դրամ միջին աշխատավարձով.

2.3.3. հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարներն ավելացնել աշխատողների թվի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.

2.3.4. կատարել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ:

2.4. Ընկերությունն իրավունք ունի՝

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. ծրագրի իրականացմանը ներգրավելու այլ կազմակերպությունների և անհատ փորձագետների, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է ընկերությունը:

3. Հաշվետվություն և մոնիթորինգ

3.1. Ընկերության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ:

3.2. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել ծրագրի շրջանակներում մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել ընկերության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր:

3.3. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում ընկերությունից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.5. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով:

3.6. Ընկերությունը նախարարությանը ներկայացնում է եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական):

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ընկերության կողմից պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նախարարության վերահսկողությունից խուսափելու դեպքում, նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը

և պահանջելու ընկերությունից վճարել հետաձգված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 1507 -Ա որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ընկերության կողմից ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4.2. Կողմերը համաձայնվում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը:

5.2. Ծրագիրը համարվում է կատարված՝ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով՝ 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցեն՝ ՀՀ, Երևան Վարշավյան 2/1
_____Տիգրան Դավթյան	_____Լևոն Հակոբյան
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ